

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

Եթե Ուսումնական խորհուրդը Կրթաշրջանի այլ առանձնահատուկ կանոններ չներկայացնի, ապա այս Բողոքի համընդհանուր ընթացակարգերը (UCP) կօգտագործվեն միայն BP 1312.3-ում նշված բողոքները քննելու և լուծելու համար:

Պատասխանատու պաշտոնյաներ

Կրթաշրջանն անհատ(ներ), պաշտոն(ներ) կամ բաժանմունք(ներ) է նշանակում, որոնք պատասխանատու են ներկայացված բողոքներին անդրադառնալու համար՝ հետևելով նահանգային և դաշնային քաղաքացիական իրավունքների մասին օրենքներին: Այդ անհատ(ներ)ը, պաշտոն(ներ)ը կամ բաժանմունք(ներ)ը ծառայում են որպես պատասխանատու պաշտոնյաներ՝ անօրինական խտրականությունները (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարքներ) հարթելու համար, ինչպես նշված է AR 5145.3-ի «ոչ խտրականություն/ոտնձգություն» բաժնում: Պատասխանատու պաշտոնյաները կստանան և կհամադրեն հետաքննության արդյունքներն օրենքին համահունչ:

Դևոն Բելլի Բինգ, Գերատեսուչի օգնական – Կրթության ծառայություններ
223 North Jackson Street
Glendale, CA 91206
(818) 241-3111, ներքին հ. 1208
kking@gusd.net

Դևոն Մարինե Ավագյան, Տնօրեն – Արդարություն, մատչելիություն և ընտանիքների ներգրավվածություն
223 North Jackson Street
Glendale, CA 91206
(818) 241-3111, ներքին հ. 1457
mavagyan@gusd.net

Պատասխանատու պաշտոնյան, ով ստանում է բողոքը, կարող է այդ բողոքի քննությունը և լուծումը հանձնարարել մի այլ պատասխանատու պաշտոնյայի: Եթե մի այլ պատասխանատու պաշտոնյա է նշանակվել բողոքը հետաքննելու համար, ապա պատասխանատու պաշտոնյան պետք է ժամանակին տեղեկացնի բողոքողին և պատասխանողին, եթե հարկն է:

Ոչ մի դեպքում չպետք է նշանակել մի պատասխանատու պաշտոնյայի, ով կողմնակալություն կամ շահերի բախում ունի, որը թույլ չի տա պատասխանատու պաշտոնյային անկողմնակալ կերպով քննությունը կատարել և լուծել խնդիրը: Պատասխանատու պաշտոնյայի դեմ բողոքը կամ պատասխանատու պաշտոնյայի արդարացի քննությունը կատարելու և խնդիրն անկողմնակալ կերպով լուծելու

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

ունակության վերաբերյալ մտահոգությունները պետք է ներկայացնել գերատեսուչին կամ նրա հանձնակատարին, ով կորոշի, թե ինչպես պետք է քննվի բողոքը:

Գերատեսուչը կամ նրա հանձնակատարը պետք է համոզված լինեն, որ պատասխատանու պաշտոնյան, ում հանձնարարվել է բողոքի քննումն ու լուծումը, վերապատրաստվել է և գիտի բողոքում նշված խնդրի վերաբերյալ օրենքի և ծրագրերի մասին: Այս աշխատակիցներին տրամադրվող վերապատրաստումը պետք է անդրադառնա ծրագրի ղեկավարման նահանգային և դաշնային օրենքներին և կանոնակարգերին, բողոքի քննման և լուծման համար կիրառելի ընթացակարգին, ներառյալ անօրինական խտրականության մեղադրանքը (ինչպես օրինակ խտրական ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարքներ), բողոքների վերաբերյալ որոշումներ կայացնելու կիրառելի չափանիշները և համապատասխան ուղղիչ միջոցները: Նշանակված աշխատակիցը կարող է կապվել իրավախորհրդատուի հետ, ինչպես սահմանված է գերատեսուչի կամ նրա հանձնակատարի կողմից:

Պատասխանատու պաշտոնյան կամ, եթե կարիք լինի, որևէ վարչական ղեկավար, պետք է որոշի, թե հետաքննության ընթացքում և արդյունքին սպասելիս արդյոք անհրաժեշտ են միջանկյալ միջոցառումներ: Եթե որոշվի, որ անհրաժեշտ են միջանկյալ միջոցառումներ, պատասխանատու պաշտոնյան կամ վարչական ղեկավարը պետք է խորհրդակցեն գերատեսուչի, նրա հանձնակատարի կամ եթե հարկն է, դպրոցի տնօրենի հետ, մեկ կամ ավելի միջանկյալ միջոցառումներ կիրառելու համար: Միջանկյալ միջոցները պետք է ուժի մեջ լինեն մինչև պատասխանատու պաշտոնյան որոշի, որ դրանք այլևս անհրաժեշտ չեն կամ մինչև Կրթաշրջանը հայտնի իր գրավոր վերջնական որոշումը. որը որ առաջինը լինի:

Ծանուցումներ

Կրթաշրջանի UCP-ի քաղաքականությունը և վարչական կանոնակարգերը պետք է փակցվեն Կրթաշրջանի բոլոր դպրոցներում և գրասենյակներում, ներառյալ հանգստի սենյակները և աշակերտական խորհրդի ժողովների սենյակը: (Կրթության օրենսգիրք 234.1)

Ի հավելումն, գերատեսուչը կամ նրա հանձնակատարը Կրթաշրջանի UCP-ի ծանուցումներն ամեն տարի պետք է տրամադրեն աշակերտներին, աշխատողներին, Կրթաշրջանի աշակերտների ծնողներին/խնամակալներին, Կրթաշրջանի և դպրոցների խորհրդատվական հանձնաժողովների անդամներին, համապատասխան մասնավոր դպրոցի պաշտոնատար անձանց կամ ներկայացուցիչներին և այլ շահագրգիռ կողմերին (5 CCR 4622)

Ծանուցումը պետք է ներառի՝

1. Հայտարարություն, որ Կրթաշրջանը հիմնականում պատասխանատու է դաշնային և նահանգային օրենքներին և կանոնակարգերին հետևելու համար, ներառյալ

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

անօրինական խտրականության, ոտնձգության, ահաբեկման կամ բռնարարների արգելումը որևէ պաշտպանված խմբի հանդեպ, և բոլոր ծրագրերի ցանկը ու գործունեությունները, որոնք ենթակա են UCP-ին, ինչպես նշված է Խորհրդի քաղաքականության «UCP-ին ենթակա բողոքներ» բաժնում:

2. Բողոքների ընդունման համար պատասխանատու պաշտոնի անվանումը, ներկայումս այդ պաշտոնը զբաղեցնող անձի(անձանց) տվյալները, եթե հայտնի են, և հայտարարություն, որ այդ անձինք տեղյակ են այն օրենքներին և ծրագրերին, որոնք իրենց հանձնարարված է հետաքննել:
3. Հայտարարություն այն մասին, որ UCP-ի բողոքը, բացառությամբ անօրինական խտրականության, ոտնձգության, ահաբեկման կամ բռնարարի մասին մեղադրանքների, պետք է ներկայացվի ենթադրյալ խախտման դեպքի օրվանից ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում:
4. Հայտարարություն այն մասին, որ ապօրինի խտրականության, հետապնդման, ահաբեկման կամ բռնության մեղադրանքներ UCP-ի բողոքը պետք է ներկայացվի ենթադրյալ պատահարի օրվանից կամ այն օրվանից, երբ բողոքողն առաջին անգամ իմացել է ենթադրյալ պատահարի փաստի մասին ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում:
5. Հայտարարություն այն մասին, որ հանրային դպրոցների աշակերտները չպետք է պահանջի վճարել ուսումնական գործունեությանը մասնակցելու համար, որը կազմում է Կրթաշրջանի ուսումնական ծրագրի հիմնական մասը, ներառյալ ուսումնական և արտադասարանային գործունեությունը:
6. Հայտարարություն, որ աշակերտական վճարներին կամ տեղական վերահսկողության և հաշվետու ծրագրին (LCAP) վերաբերող բողոքները կարող են ներկայացվել անանուն, եթե բողոքը ներկայացնի ապացույցներ կամ տեղեկություններ, որոնք հանգեցնում են բողոքը հաստատող ապացույցների:
7. Հայտարարություն, որ Կրթաշրջանը կփակցնի խնամքի տակ գտվող դեռահասների, անօթևան աշակերտների և Կրթաշրջանում արձանագրված դեռահասների, դատարանի դպրոցի աշակերտների, զինվորական ընտանիքների երեխաների, գաղթական աշակերտների և նորեկների ծրագրում արձանագրված գաղթական աշակերտների կրթական իրավունքների վերաբերյալ ստանդարտացված ծանուցումը, ինչպես նշված է Կրթության օրենսգրքի 48853, 48853.5, 49069.5, 51225.1 և 51225.2 մասերում և բողոքի գործընթացում:
8. Հայտարարություն, որ բողոքները կքննվեն Կրթաշրջանի UCP-ի դրույթներին համապատասխան, և գրավոր որոշումը կուղարկվի բողոքողին՝ բողոքը ստանալուց 60

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

օրվա ընթացքում, եթե այս ժամկետը չի երկարացվել բողոքողի գրավոր համաձայնությամբ:

9. Հայտարարություն, որ բողոքողը, UCP-ի ենթակայության ծրագրերի համար, ինչպես նշված է խորհրդի կից քաղաքականության մեջ, իրավունք ունի բողոքարկել Կրթաշրջանի հետաքննության հաշվետվությունը Կալիֆոռնիայի կրթության վարչությունում (CDE)՝ ներկայացնելով գրավոր բողոքարկում UCP-ի ենթակայության շրջանակներում գտնվող ծրագրերի վերաբերյալ, դրան կցելով բողոքի բնօրինակի և Կրթաշրջանի որոշման պատճենները, Կրթաշրջանի որոշումը ստանալուց 30 օրացուցային օրվա ընթացքում:
10. Հայտարարություն, որը տեղեկացնում է բողոքողին քաղաքացիական իրավական պաշտպանության միջոցների մասին, որը ներառում է, բայց չի սահմանափակում դատական որոշումները, դատարանի կողմից նշանակված արգելքները կամ այլ իրավական պաշտպանության որոշումներ կամ հրամաններ, որ առկա են նահանգային կամ դաշնային օրենքներում, որոնք արգելում են խտրականություն, ոտնձգություն, սահաբեկում կամ բռնարարություն, եթե վերաբերում է:
11. Հայտարարություն, որ Կրթաշրջանի UCP-ի պատճենները հասանելի են անվճար:
12. Հայտարարություն առ այն, որ պետական նախադպրոցական հաստատություններում առողջության և անվտանգության խնդիրների պատշաճ սուբյեկտների բացահայտման համար, համաձայն Կալիֆոռնիայի Առողջության և անվտանգության օրենսգրքի (HSC) 1596.7925 բաժնի, ծանուցում պետք է տեղադրվի Կալիֆոռնիայի նահանգային նախադպրոցական ծրագրի յուրաքանչյուր դպրոցի յուրաքանչյուր դասարանում, յուրաքանչյուր տեղական կրթական գործակալությունում՝ ծնողներին, խնամակալներին, աշակերտներին և ուսուցիչներին ծանուցելով հետևյալի մասին.
 1. Կալիֆոռնիայի *Կանոնակարգերի (5CCR) 5-րդ* գլխի նախատեսած առողջության և անվտանգության պահանջները կիրառվում են Կալիֆոռնիա նահանգի նախադպրոցական ծրագրերի համար՝ համաձայն *HSC-ի 1596.7925* մասի:
 2. Այն վայրը, որտեղից կարելի է բողոք ներկայացնելու ձև ստանալ: Կալիֆոռնիայի կրթության վարչության (CDE) կայքից ներբեռնելի ծանուցման տեղադրումը պետք է բավարարի այս պահանջը:

Տարեկան ծանուցումները, պատասխանատու պաշտոնյաների հետ կապվելու ամբողջական տեղեկությունը և Title IX-ի վերաբերյալ տեղեկությունները, Կրթության օրենսգրքի 221.61 մասի համաձայն, պետք է տեղադրվի Կրթաշրջանի կայքում և կարելի է տրամադրել Կրթաշրջանի հաստատած սոցիալական ցանցերի միջոցով, եթե առկա են:

Գերատեսուչը կամ նրա հանձնակատարը պետք է վստահանան, որ բոլոր աշակերտները և ծնողները/խնամակալները, ներառյալ անգլերենի սահմանափակ իմացությամբ

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

աշակերտները և ծնողները/խնամակալները հասու են Կրթաշրջանի քաղաքականությանը, կանոններին, դիմումների ձևերին և UCP-ի վերաբերյալ ծանուցումներին:

Եթե Կրթաշրջանի որոշակի դպրոցի աշակերտների 15 տոկոսը կամ ավելին խոսում են անգլերենից տարբեր միևնույն՝ իրենց հիմնական լեզվով, ապա համաձայն Կրթության օրենսգրքի 234.1 և 48985 բաժինների՝ Կրթաշրջանի քաղաքականությունը, կանոնները, դիմումների ձևերը և ծանուցումները պետք է թարգմանվեն այդ լեզուներով: Բոլոր դեպքերում, Կրթաշրջանը պետք է վստահանա, որ անգլերենի սահմանափակ իմացությամբ ծնողները/խնամակալները, հնարավորության սահմաններում, հասու են UCP-ի վերաբերյալ տեղեկություններին:

Բողոք ներկայացնելը

Բողոքը պետք է ներկայացնել պատասխանատու պաշտոնյային, ով պետք է պահի ստացված բողոքների ցուցակը, յուրաքանչյուր բողոք կողմերի և թվագրի:

Բոլոր բողոքները պետք է ներկայացնել գրավոր և բողոքողի կողմից ստորագրված: Եթե բողոքողը չի կարող իր բողոքը գրավոր ներկայացնել, օրինակ՝ հաշմանդամության կամ անգրագիտության պատճառով, Կրթաշրջանի աշխատակիցները պետք է կօգնեն նրան բողոքը ներկայացնել: (5 CCR 4600)

Բողոքները պետք է ներկայացվեն հետևյալ կանոնների համաձայն, ըստ կիրառելիության:

1. Ցանկացած բողոք, որ ենթադրում է կիրառելի նահանգային կամ դաշնային օրենքի կամ կանոնների խախտում Կրթաշրջանի կողմից, որոնք կառավարում են Ուսումնական խորհրդում նշված ծրագրերը, կարող է ներկայացվել ցանկացած անհատի, հանրային կառույցի կամ կազմակերպության կողմից (5 CCR 4630)
2. Ուսումնական աշխատանքներին մասնակցելու համար աշակերտներից վճար, կանխավճար և այլ տեսակի գանձումների վերաբերյալ խախտումների կամ LCAP-ի հետ կապված որևէ պահանջի վերաբերյալ բողոքը կարող է ներկայացվել անանուն, եթե բողոքողը փաստեր կամ տեղեկություններ է ներկայացնում, որոնք հանգեցնում են խախտման բացահայտմանը: Աշակերտներից անօրինական գանձումներ կատարելու մասին բողոքը կարելի է ներկայացնել դպրոցի տնօրենին, գերատեսուչին կամ նրա հանձնակատարին:
3. UCP-ի բողոքը, բացառությամբ UCP-ի այն բողոքի, որը վերաբերում է անօրինական խտրականությանը, հետապնդմանը, ահաբեկմանը կամ բռնարարությանը, պետք է ներկայացվի ենթադրյալ խախտումը կատարելու օրվանից ոչ ուշ, քան մեկ տարվա ընթացքում: LCP-ի հետ կապված բողոքների համար, ենթադրյալ խախտման ամսաթիվն այն օրն է, երբ Վարչաշրջանի դպրոցների գերատեսուչը հաստատում է LCAP-ը, որն ընդունվել էր Խորհրդի

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

կողմից: (5 CCR 4630)

4. Անօրինական խտրականության, ոտնձգության, ահաբեկման կամ բռնարարքի վերաբերյալ բողոքը կարող է ներկայացվել միայն անձը, ով ենթարկվել է անօրինական խտրականության, անձը, ով հավատացած է, որ անհատների որևէ խումբ ենթարկվել է անօրինական խտրականության կամ պատշաճ կերպով լիազորված ներկայացուցիչը, որը պնդում է, որ անհատ աշակերտը ենթարկվել է խտրականության, ոտնձգության, ահաբեկման կամ բռնարարքների: (5 CCR 4630)
5. Անօրինական խտրականության, ոտնձգության, ահաբեկման կամ բռնարարքի մեղադրանքով բողոքը պետք է ներկայացնել ենթադրյալ անօրինական խտրականության պատահարից հետո վեց ամսվա ընթացքում կամ ենթադրյալ անօրինական խտրականության մասին իմանալուց հետո վեց ամսվա ընթացքում: Բողոքը ներկայացնելու ժամկետը կարելի է երկարաձգել մինչև 90 օրվա՝ բողոքողի կողմից գրավոր դիմում ներկայացնելով գերատեսուչին կամ նրա հանձնակատարին՝ բացատրելով պատճառը
6. Երբ անօրինական խտրականության, ոտնձգության, ահաբեկման կամ բռնարարքի մեղադրանքով բողոքը ներկայացվում է անանուն, ապա պատասխանատու պաշտոնյան պետք է հետամուտ լինի հետաքննությանը կամ այլ պատասխանի ըստ պատշաճի՝ կախված տրամադրված տեղեկատվության առանձնահատկությունից և հուսալիությունից և մեղադրանքի լրջությունից:
7. Երբ անօրինական խտրականության, ոտնձգության, ահաբեկման կամ բռնարարքի մասին բողոքողը կամ ենթադրյալ գոհը, ով բողոքողը չէ, պահանջում է գաղտնիություն, պատասխանատու ծառայողը պետք է տեղեկացնի բողոքողին կամ գոհին, որ այդ պահանջը կարող է սահմանափակել վարքագծի՝ հետաքննություն վարելու կամ այլ անհրաժեշտ գործողություններ ձեռնարկելու Կրթաշրջանի կարողությունը: Գաղտնիության խնդրանքը հարգելով հանդերձ, Կրթաշրջանը, այնուամենայնիվ, պետք է ձեռնարկի բոլոր ողջամիտ քայլերը՝ բողոքը հետաքննելու և խնդրին համապատասխանող լուծում/պատասխան տալու համար:

Միջնորդություն

Բողոքը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում, պատասխանատու պաշտոնյան կողմերի հետ ոչ պաշտոնական կարգով կքննարկի բողոքը լուծելու համար միջնորդություն օգտագործելու հնարավորությունը: Միջնորդություն կարող է առաջարկվել այն բողոքների դեպքում, երբ մեկից ավելի աշակերտ է ներգրավված և ոչ մի չափահաս: Այնուամենայնիվ, միջնորդություն չպետք է առաջարկվի կամ օգտագործվի սեռական բռնության դեպքերում կամ այն դեպքում, երբ կողմերը իրենց պարտադրված կզգան միջնորդությանը մասնակցել: Եթե կողմերը համաձայն լինեն միջնորդության հետ, պատասխանատու պաշտոնյան պետք է կատարի բոլոր նախապատրաստություններն այս

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

գործընթացի համար:

Նախքան վրեժխնդրության կամ անօրինական խտրականության, ոտնձգության, ահաբեկման կամ բռնարարի վերաբերյալ բողոքի լուծման համար միջնորդության նախաձեռնումը, պատասխանատու պաշտոնյան պետք է վստահանա, որ բոլոր կողմերը համաձայն են թույլ տալ միջնորդին օգտվել բոլոր կարևոր գաղտնի տեղեկություններին: Պատասխանատու պաշտոնյան պետք է կողմերին հայտնի, որ նրանք իրավունք ունեն ոչ պաշտոնական գործընթացը դադարեցնել ցանկացած պահի:

Եթե օրենքի սահմաններում միջնորդության միջոցով խնդիրը չլուծվի, պատասխանատու պաշտոնյան պետք է շարունակի բողոքի քննությունը:

Միջնորդության գործընթացը չպետք է երկարացնի Կրթաշրջանի բողոքը հետաքննելու և լուծելու համար սահմանած ժամկետը, բացառությամբ, եթե բողոքողը գրավոր համաձայնվել է ժամկետը երկարացնելու հետ: Եթե միջնորդությունը հաջողությամբ է ավարտվում, բողոքը հանվում է և Կրթաշրջանը կկատարի միայն միջնորդության միջոցով համաձայնեցված գործողությունները: Եթե միջնորդությունն անարդյունք ավարտվի, Կրթաշրջանը պետք է շարունակի վարչական կանոնակարգով սահմանված քայլերը:

Բողոքի հետաքննում

Բողոքը ստանալուց հետո մինչև 10 աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու պաշտոնյան պետք է սկսի բողոքի քննությունը:

Հետաքննությունը նախաձեռնելուց հետո, մեկ աշխատանքային օրվա ընթացքում, պատասխանատու պաշտոնյան պետք է բողոքողին կամ նրա ներկայացուցչին հնարավորություն տա ներկայացնելու բողոքում ներառված տեղեկությունները և բողոքողին կամ նրա ներկայացուցչին տեղեկացնի բողոքին նպաստող ապացույցներ կամ ապացույցներին հանգեցնող տեղեկություններ ներկայացնելու հնարավորության մասին: Այսպիսի ապացույցներ կամ տեղեկություններ կարելի է ներկայացնել հետաքննության ամբողջ ընթացքում:

Հետաքննություն կատարելիս՝ պատասխանատու պաշտոնյան պետք է հավաքի բոլոր փաստաթղթերը և վերանայի բոլոր մատչելի արձանագրությունները, գրառումները կամ բողոքին վերաբերող հայտարարությունները, ներառյալ հետաքննության ընթացքում, կողմերից ստացած որևէ լրացուցիչ ապացույց կամ տեղեկություն: Պատասխանատու պաշտոնյան պետք է առանձին հարցազրույցներ անցկացնի բոլոր վկաների հետ, ովքեր բողոքի հետ կապված տեղեկություններ ունեն և կարող է այցելել այն մատչելի վայրերը, որտեղ ենթադրվում է, որ տեղի են ունեցել գործողությունները: Պատասխանատու պաշտոնյան համապատասխան պարբերականությամբ պետք է կողմերին տեղեկացնի

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

հետաքննության ընթացքի մասին:

Վրեժխնդրության կամ անօրինական խտրականության, ոտնձգության, ահաբեկման կամ բռնարարքի վերաբերյալ բողոք հետաքննելիս՝ պատասխանատու պաշտոնյան պետք է առանձին և գաղտնի հարցաքննի ենթադրյալ զոհերին, ենթադրյալ իրավախախտողին և վկաներին: Ըստ անհրաժեշտության, անձնակազմի այլ անդամներ կամ իրավաբաններ կարող են վարել կամ աջակցել հետաքննությանը:

Եթե բողոքողը հրաժարվի Կրթաշրջանի հետաքննողին մեղադրանքին վերաբերող փաստաթղթեր կամ այլ ապացույցներ ներկայացնել, չհամագործակցել կամ որևէ այլ կերպ խոչընդոտել հետաքննությանը, հնարավոր է այն փակվի ապացույցների բացակայության պատճառով: Կրթաշրջանի կողմից մերժումը հետաքննողին մեղադրանքի վերաբերող փաստաթղթեր և/կամ տեղեկություններ ներկայացնել, չհամագործակցելը կամ խոչընդոտելը հետաքննության աշխատանքներին, ապա հավաքած ապացույցների հիման վրա որոշում կարող է կայացվել, որ խախտումը տեղի է ունեցել և միջոցներ կկիրառվեն հօգուտ բողոքողի (5 CCR 4631):

Ըստ օրենքի, Կրթաշրջանը պետք է մեղադրանքին վերաբերող բոլոր արձանագրությունները և այլ տեղեկությունները մատչելի դարձնի հետաքննողին և չպետք է որևէ կերպ խոչընդոտի հետաքննության աշխատանքներին: Հետաքննության մեջ Կրթաշրջանի՝ համագործակցությունից հրաժարվելը, կհանգեցնի վճիռ կայացնելուն հավաքած ապացույցների հիման վրա, ըստ որոնց խախտումը տեղի է ունեցել և միջոցներ կկիրառվեն հօգուտ բողոքողի: (5 CCR 4621)

Հետաքննության զեկույցի ժամկետները

Հետաքննության զեկույցը պետք է բողոքողին ուղարկվի բողոքը ստանալուց հետո 60 օրացուցային օրվա ընթացքում, բացառությամբ, եթե ժամկետը երկարացվել է բողոքողի գրավոր համաձայնությամբ: Բողոքը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում պատասխանատու պաշտոնյան պետք է գրավոր զեկույց պատրաստի և բողոքողին ուղարկի, ինչպես նկարագրված է ստորև «Հետաքննության զեկույց» բաժնում: Եթե բողոքողը դժգոհ է պատասխանատու պաշտոնյայի որոշումից, նա կարող է հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր բողոք ներկայացնել Ուսումնական խորհրդին:

Ուսումնական խորհուրդը կարող է խնդիրը քննարկել իր հաջորդ հերթական ժողովում կամ արտակարգ ժողով գումարել 60 օրվա ժամկետը պահպանելու համար, որի ընթացքում բողոքին պետք է պատասխան տալ: Երբ օրենքով պահանջվում է, խնդիրը պետք է փակ դռների ետևում քննարկվի: Ուսումնական խորհուրդը կարող է բողոքը չլսելու որոշում կայացնել, որի դեպքում պատասխանատու պաշտոնյայի որոշումը վերջնական կլինի:

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

Եթե ուսումնական խորհուրդը լսի բողոքը, պատասխանատու պաշտոնյան պետք է բողոքը ստանալուց հետո 60 օրացուցային օրվա ընթացում կամ գրավոր համաձայնագրում նշված ժամկետում, ուսումնական խորհրդի որոշումը ուղարկի բողոքողին: (5 CCR 4631)

Անօրինական խտրականության, ոտնձգության, ահաբեկման կամ բռնարարի վերաբերյալ որևէ բողոքի պարագայում, պատասխանողը պետք է տեղեկացվի բողոքողի հետ համաձայնեցված ժամկետի երկարաձգման վերաբերյալ, նրան պետք է ուղարկվի Կրթաշրջանի հետաքննության գեկույցը: Պատասխանողը, կայացված որոշումից դժգոհ լինելու դեպքում, կարող է բողոք ներկայացնել Ուսումնական խորհրդին այնպես, ինչպես բողոքողը:

Հետաքննության գեկույց

Բոլոր բողոքների համար Կրթաշրջանի հետաքննության գեկույցը պետք է ներառի. (5CCR 4631)

1. Հավաքված ապացույցների հիման վրա փաստի բացահայտումները:
2. Յուրաքանչյուր մեղադրանքի համար հստակ որոշում կայացնելու մասին եզրակացություն, թե արդյոք Կրթաշրջանը պահպանել է համապատասխանություն օրենքին:
3. Ուղղիչ գործողություն(ներ), երբ Կրթաշրջանը բողոքը կարևորում է, այդ թվում, երբ օրենքը պահանջում է, բոլոր տուժած աշակերտների և ծնողների/խնամակալների համար միջոցներ, իսկ աշակերտների վարձավճարների վերաբերյալ բողոքների համար՝ Կրթության օրենսգրքի 49013 և 5 CCR 4600 բաժիններին համապատասխանող միջոցներ:
4. Ծանուցում բողոքողի՝ Կրթաշրջանի հետաքննության գեկույցը CDE-ին բողոքարկելու իրավունքի մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ Կրթաշրջանն օգտագործել է UCP-ն՝ անդրադառնալու համար 5 CCR 4610-ում չհիշատակված բողոքի:
5. CDE-ին բողոքարկում սկսելու համար դրան հաջորդող ընթացակարգերը:

Հետաքննության գեկույցը կարող է ներառել նաև հաջորդիվ ընթացակարգերը՝ կրկնությունը կամ վրեժխնդրությունը կանխելու և հետագայում ծագած խնդիրների մասին գեկույցելու համար:

Հետաքննության գեկույցը կարող է ներառել հետագայում կիրառվող ընթացակարգը՝ միջադեպը կամ վրեժխնդրությունը կանխելու և հետագա խնդիրները գեկույցելու համար:

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

Կրթաշրջանի փաստաբանի հետ խորհրդակցելով՝ հետաքննության գեկույցի համապատասխան մասի վերաբերյալ տեղեկությունը պետք է հաղորդվի տուժող կողմին, ով բողոքողը չէ, և մյուս կողմերին, ովքեր հնարավոր է ներգրավված լինեն հետաքննության գեկույցի իրականացման մեջ կամ տուժած լինեն բողոքից՝ մինչ պահպանելով կողմերի գաղտնիությունը: Անօրինական խտրականության, ոտնձգության, ահաբեկման կամ բռնարարի վերաբերյալ բողոքում տուժողին ներկայացվող Կրթաշրջանի հետաքննության գեկույցի ծանուցումը պետք է ներառի տեղեկություններ մեղադրվողի հանդեպ կիրառվող ցանկացած պատժամիջոցի մասին, որ ուղղակիորեն տուժողին է վերաբերում:

Եթե բողոքն առնչվում է սահմանափակ անգլերենի իմացությամբ աշակերտին կամ ծնողին/խնամակալին, ապա Կրթաշրջանի պատասխանը, և հետաքննության եզրակացությունը, եթե բողոքողը պահանջի, պետք է գրվեն անգլերենով և այն լեզվով, որով ներկայացվել է բողոքը:

Ըստ օրենքի, անօրինական խտրականության, ոտնձգության, ահաբեկման կամ բռնարարի մեղադրանքով բողոքի համար հետաքննության գեկույցը պետք է ներառի բողոքողին ուղղված ծանուցում, որ.

1. Բողոքողը կարող է դիմել քաղաքացիական դատարան Կրթաշրջանի բողոքարկման ընթացակարգից դուրս, ներառյալ միջնորդ կենտրոնը կամ հանրային/մասնավոր փաստաբանի օգնության դիմելը՝ CDE-ին բողոք ներկայացնելուց 60 օրվա ընթացքում: (Կրթության օրենսգիրք 262.3)
2. 60 օրվա ժամկետը չի վերաբերում այն բողոքներին, որոնք դատական օգնության կարիք ունեն նահանգային դատարաններում կամ խտրականության բողոքներին, համաձայն դաշնային օրենքի: (Կրթության օրենսգիրք 262.3)
3. Ռասայի, մաշկի գույնի, ազգային ծագման, սեռի, անկարողության կամ տարիքի հետ կապված խտրականության մեղադրանքով բողոքները նույնպես կարելի է ներկայացնել ԱՄՆ-ի կրթության վարչության քաղաքացիական իրավունքների գրասենյակին՝ www.ed.gov/ocr կայքում, ենթադրյալ խտրականության միջադեպից 180 օրվա ընթացքում:

Ուղղիչ գործողություններ

Երբ պարզվի, որ բողոքը հիմք ունի, պատասխանատու պաշտոնյան պետք է օրենքով թույլատրված համապատասխան ուղղիչ գործողություններ ձեռնարկի: Համապատասխան ուղղիչ գործողությունները, որոնք կկենտրոնանան դպրոցի կամ Կրթաշրջանի ավելի լայն միջավայրի վրա, կարող են ներառել, բայց չսահմանափակվել Կրթաշրջանի քաղաքականության ամրապնդմանն ուղղված գործողություններով. անձնակազմի և աշակերտների վերապատրաստում, դպրոցի կանոնների վերափոխում

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

կամ դպրոցի մթնոլորտի վերաբերյալ հարցումներ:

Վրեժխնդրության կամ անօրինական խտրականության, ոտնձգության, ահաբեկման կամ բռնարարքի վերաբերյալ բողոքների դեպքում գոհին կարող են առաջարկվել համապատասխան միջոցներ, չհաղորդելով պատասխանողին, դրանք կարող են ներառել, բայց չսահմանափակվելով, հետևյալը՝

1. Խորհրդատվություն
2. Ուսումնական աջակցություն
3. Առողջապահական ծառայություններ
4. Ուղեկցորդի տրամադրում, որպեսզի գոհը կարողանա ապահով շրջել դպրոցում
5. Տեղեկություն առկա ռեսուրսների և այն մասին, թե ինչպես զեկուցել նմանատիպ միջադեպերի կամ վրեժխնդրության մասին
6. Չոհին առանձնացնել միջադեպի մեջ ներգրավված անձանցից, բայց ոչ պատժի տեսքով
7. Վերականգնողական արդարադատություն
8. Հետևել՝ վստահանալու համար, որ վարքագծի դրսևորումը դադարել է և վրեժխնդրության դեպքեր չեն եղել:

Վրեժխնդրության կամ անօրինական խտրականության, ոտնձգության, ահաբեկման կամ բռնարարքի մեղադրանքով բողոքի համար, որոնք ներառում են աշակերտին, որպես պատասխանող, համապատասխան ուղղիչ գործողությունները, որոնք կարող են տրամադրվել աշակերտին, կարող են ներառել, բայց չսահմանափակվելով դրանով, հետևյալը՝

1. Փոխադրում մեկ այլ դասարան կամ այլ դպրոց՝ համաձայն օրենքի
2. Ծնողի/խնամակալի հետ ժողով
3. Ուսուցում մյուսների վրա քո վարքագծի ազդեցության մասին
4. Դրական վարքի աջակցություն
5. Աշակերտին հղել Աշակերտի հաջողություններն ուսումնասիրող հանձնախմբին
6. Ուսումնական ծրագրից դուրս կամ համաձայնաբերային աշխատանքներին մասնակցելու արտոնությունից զրկել՝ համաձայն օրենքի
7. Պատժամիջոցներ, ինչպես օրինակ՝ դպրոցից ժամանակավոր հեռացում կամ հեռացում՝ համաձայն օրենքի

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

Երբ պարզվի, որ աշխատակիցը վրեժխնդրություն կամ անօրինական խտրականություն, ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք է կատարել, Կրթաշրջանը պետք է պատժամիջոցներ ձեռք առնի, ընդհուպ մինչև աշխատանքից ազատում, համաձայն գործող օրենքի և կոլեկտիվ բանակցությունների պայմանագրի:

Կրթաշրջանը կարող է վերապատրաստում և այլ միջամտություններ տրամադրել ընդլայնված դպրոցական համայնքին, որպեսզի վստահ լինի, որ աշակերտները, անձնակազմը և ծնողները/խնամակալները հասկանում են, թե որ վարքագիծն է համարվում անօրինական խտրականություն, ոտնձգություն, ահաբեկում կամ բռնարարք, որ Կրթաշրջանը դա չի հանդուրժում և ինչպես զեկույցել ու արձագանքել դրան:

Երբ բողոքն իրենից կարևորություն է ներկայացնում, բողոքողին կամ վնաս կրած այլ անձին համապատասխան միջոցներ են տրամադրվում:

Այնուամենայնիվ, եթե պարզվի, որ բողոքը, որը ենթադրում է անհամապատասխանություն աշակերտների վճարների, կանխավճարների և այլ ծախսերի, մարմնամարզության դասի բոլորների, առանց կրթական բովանդակության դասընթացների կամ LCAP-ի հետ կապված որևէ պահանջի վերաբերյալ օրենքի հետ, հիմք ունի, ապա Կրթաշրջանը պետք է միջոցներ տրամադրի բոլոր տուժված աշակերտներին և ծնողներին/խնամակալներին՝ համաձայն նահանգային Ուսումնական խորհրդի կանոնակարգի ընթացակարգերի: (Կրթության օրենսգիրք 49013, 51222, 51223, 51228.3, 52075)

Բողոքները, որոնք ենթադրում են անհամապատասխանություն աշակերտների վճարների մասին օրենքների հետ, Կրթաշրջանը ողջամիտ ջանքերի շնորհիվ պետք է բարեխղճորեն հայտնաբերի և ամբողջությամբ վերադարձնի ողջ վնասն աշակերտներին և ծնողներին/խնամակալներին, ովքեր վճարել են անօրինական գանձումներ՝ բողոքը ներկայացնելուց առաջ մեկ տարվա ընթացքում: (Կրթության օրենսգիրք 49013, 5 CCR 4600)

Բողոքարկումներ Կալիֆոռնիայի Կրթության վարչությանը

Ցանկացած բողոքող, որը դժգոհ է UCP-ին ենթակա որևէ դաշնային կամ նահանգային ուսումնական ծրագրի վերաբերյալ Կրթաշրջանի հետաքննության զեկույցից, կարող է որոշումը գրավոր բողոքարկել CDE-ին՝ Կրթաշրջանի հետաքննության զեկույցը ստանալուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում: (5 CCR 4632)

Բողոքարկումը պետք է ներկայացվի CDE-ին՝ սկզբնական բողոքի պատճենի և այդ բողոքի վերաբերյալ Կրթաշրջանի հետաքննության զեկույցի պատճենի հետ միասին: Բողոքողը պետք է հստակեցնի և բացատրի բողոքարկման հիմքը, ներառյալ հետևյալներից առնվազն մեկը. (5 CCR 4632)

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

1. Կրթաշրջանը չի հետևել բողոքի իր ընթացակարգերին:
2. Բողոքի մեղադրանքների հետ կապված՝ Կրթաշրջանի հետաքննության զեկույցում բացակայում են նյութական փաստարկները, որոնք անհրաժեշտ են օրինական եզրակացության հանգելու համար:
3. Կրթաշրջանի հետաքննության զեկույցում փաստի նյութական բացահայտումները չեն պաշտպանվում էական ապացույցներով:
4. Կրթաշրջանի հետաքննության զեկույցում ներկայացված իրավական եզրակացությունը չի համապատասխանում օրենքին:
5. Այն դեպքում, երբ Կրթաշրջանը գտնի անհամապատասխանություն օրենքի հետ, ուղղիչ գործողությունները չեն ապահովի պատշաճ լուծում:

Երբ CDE-ն հայտնի, որ Կրթաշրջանի հետաքննության հաշվետվությունը բողոքարկվել է, գերատեսուչը կամ նրա հանձնակատարը պետք է ծանուցման օրվանից 10 օրվա ընթացքում CDE-ին ուղարկեն հետևյալ փաստաթղթերը. (5 CCR 4633)

1. Սկզբնական բողոքի պատճենը
2. Կրթաշրջանի հետաքննության զեկույցի հաշվետվության պատճենը
3. Հետաքննվող գործի պատճենը, ներառյալ, բայց չսահմանափակվելով, բոլոր գրառումները, հարցազրույցները և կողմերի ներկայացրած և քննիչի կողմից հավաքված փաստաթղթերը
4. Հաշվետվություն բողոքը լուծելու ուղղությամբ ձեռնարկված ցանկացած գործողության մասին
5. Կրթաշրջանի Բողոքի համընդհանուր ընթացակարգերի պատճենը
6. CDE-ի կողմից պահանջված այլ համապատասխան տեղեկություններ

Եթե CDE-ի կողմից տեղեկացվել է, որ Կրթաշրջանի հետաքննության զեկույցում չեն լուծվել բողոքում առաջադրված մեղադրանք(ներ)ը, ապա Կրթաշրջանը ծանուցումից հետո 20 օրվա ընթացքում պետք է CDE-ին և բողոքարկուին տրամադրի փոփոխված հետաքննության զեկույց այն մեղադրանքների վերաբերյալ, որոնք հետաքննության սկզբնական զեկույցում նշված չէին: Փոփոխված զեկույցը նաև բողոքարկողին պետք է տեղեկացնի փոփոխված զեկույցը առանձին բողոքարկելու իրավունքի մասին՝ կապված այն մեղադրանքների հետ, որոնց չեն անդրադարձել սկզբնական զեկույցում: (5 CCR 4632)
Հանրային կրթության պետական գերատեսուչը կամ նրա պաշտոնակատարը պետք է հետևի 5 CCR 4633 բաժնի պահանջներին և LEA-ի հետաքննության գրավոր հաշվետու

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

գեկույց տրամադրի Կրթության պետական խորհրդին, որը նկարագրում է բողոքի հիմքը և դրա լուծման միջոցը կամ առաջարկված միջոցը, և ինչպես հարկն է, բողոքում նկարագրված հարցի համար առաջարկվող լուծումը, եթե այն տարբերվում է LEA-ի լուծումից:

Առողջության և անվտանգության բողոքներ արտոնագրերից գերծ նախադպրոցական ծրագրում

Առողջության կամ անվտանգության վերաբերյալ ցանկացած բողոք Արտոնագրից գերծ CSPP ծրագրում պետք է քննարկվի 5CCR 4690-4694 մասում նկարագրված ընթացակարգերի հիման վրա:

Արտոնագրման արտոնյալ պայմաններով նախադպրոցական ծրագրի (CSPP) առողջության և անվտանգության հարցերի համապատասխան սուբյեկտները բացահայտելու համար՝ համաձայն Առողջության և անվտանգության օրենսգրքի 1596.7925 հոդվածի, պետք է ծանուցում տեղադրվի Կրթաշրջանի արտոնագրից ազատված CSPP ծրագրի յուրաքանչյուր դասասենյակում՝ ծնողներին/խնամակալներին և աշակերտներին ու ուսուցիչներին տեղեկացնելով Title 5-ի կանոնակարգերին և տեղը, որտեղից կարող են ձեռք բերել այդ պահանջներին անհամապատասխանություն ենթադրող բողոքի ձևը, որոնք վերաբերում են առողջության և անվտանգության պահանջներին և կիրառվում են նախադպրոցական CSPP ծրագրերի հանդեպ՝ Առողջապահության և անվտանգության օրենսգրքի 1596.7925 մասի համաձայն: (Կրթության օրենսգրքի 8235.5, 5 CCR 4690)

Կրթաշրջանի տարեկան UCP ծանուցումը, որը տարածվել է 5 CCR 4622 մասի համաձայն, հստակորեն նշում է, թե իր CSPP ծրագրերից որն է գործում՝ որպես արտոնագրումից ազատված, և որ CSPP ծրագրերն են գործում են կանոնակարգի 22-րդ վերնագրի պահանջների համաձայն: (5 CCR 4691)

Ցանկացած բողոք, որը վերաբերում է արտոնագրված CSPP ծրագրում առողջության կամ անվտանգության հետ կապված որոշակի խնդիրներին, պետք է ներկայացվի նախադպրոցական ծրագրի վարիչին կամ հանձնառու անձին և կարող է ներկայացվել անանուն: Բողոքի ձևը պետք է նշի բողոքը ներկայացնելու վայրը, պարունակի հատված՝ նշելու, թե արդյոք բողոքողը ցանկանում է բողոքին պատասխան ստանալ և թույլ տա բողոքողին ավելացնել ցանկացած չափի տեքստ՝ բողոքը բացատրելու համար: (Կրթության օրենսգրքի 8235.5, 5CCR 4690)

Եթե պարզվի, որ բողոքը նախադպրոցական ծրագրի ղեկավարության լիազորություններից դուրս է, խնդիրը լուծելու համար այն պետք է փոխանցվի գերատեսուչին կամ նրա հանձնակատարին՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում: Նախադպրոցական հաստատության ղեկավարը, գերատեսուչը կամ նրա

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

հանձնակատարը պետք է ողջամտության սահմաններում գործադրեն բոլոր ջանքերը՝ իրենց լիազորությունների սահմաններում գտնվող ցանկացած բողոք քննելու համար: (Կրթության օրենսգիրք 8235.5; CCR 46902)

Արտոնագրից ազատված CSPP նախադպրոցական ծրագրում առողջության կամ անվտանգության խնդիրներին վերաբերող բողոքների քննությունը պետք է սկսվի բողոքը ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում: (Կրթության օրենսգիրք 8235.5, CCR 4692)

Նախադպրոցական կրթության ղեկավարը կամ հանձնակատարը հիմնավորված բողոքը շտկում է ողջամիտ ժամկետում՝ ոչ ավելի, քան բողոքը ստանալու պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե բողոքող կողմը բողոքի դիմումում նշել է բողոքին պատասխան ստանալու ցանկություն, նախադպրոցական հիմնարկի ղեկավարը կամ գերատեսուչի հանձնակատարը պետք է բողոքի լուծման մասին զեկույցի հայցադիմողին և CDE-ի ոլորտի նշանակված խորհրդատուին՝ բողոքի ներկայացման պահից 45 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե նախադպրոցական հաստատության վարիչը կազմում է այս զեկույցը, ապա տեղեկությունը պետք է միաժամանակ հաղորդի գերատեսուչին կամ նրա հանձնակատարին: (Կրթության օրենսգիրք 8235.5, 5 CCR 4692)

Եթե արտոնագրից ազատված CSPP ծրագրում առողջության կամ անվտանգության հարցերի վերաբերյալ բողոքը ներառում է սահմանափակ անգլերենի իմացությամբ աշակերտ կամ ծնող/խնամակալ, ապա բողոքողի պահանջի դեպքում Կրթաշրջանի պատասխանը և հետաքննության զեկույցը պետք է գրված լինեն անգլերենով և այն հիմնական լեզվով, որով ներկայացվել էր բողոքը:

Եթե բողոքողը բավարարված չէ բողոքի լուծումով, բողոքողն իրավունք ունի բողոքը նկարագրել Խորհրդին՝ հերթական նիստում և գրավոր զեկույցից հետո 30 օրվա ընթացքում, նա կարող է գրավոր կերպով բողոքարկել Կրթաշրջանի որոշումը Հանրային դպրոցների գերատեսուչին, համաձայն 5 CCR 4632-ի: (Կրթության օրենսգիրք 8235.5, 5 CCR 4693, 4694)

Բոլոր բողոքներն ու դրանց պատասխանները հանրային արձանագրություններ են: (5 CCR 4690)

Եռամսյակային կտրվածքով գերատեսուչը կամ նրա հանձնակատարը պետք է Խորհրդի հերթական նիստին և վարչաշրջանի դպրոցների գերատեսուչին ամփոփված հաշվետվություն ներկայացնի առողջապահության և անվտանգության վերաբերյալ բոլոր բողոքների բնույթի, լուծման, դրանց ընդհանուր առարկայի և լուծված ու չլուծված բողոքների քանակի վերաբերյալ: (5 CCR 4693)

Գլենդելի հանրային դպրոցների կրթաշրջան
Վարչական կանոնակարգ

AR 1312.3
Էջ 16-ը 16-ից

Համայնքային հարաբերություններ

Բողոքի համընդհանուր ընթացակարգեր

Կանոններն ընդունվել են. 08/1985

Կանոնները վերանայվել են. 07/16/1991; 11/03/1992; 10/07/1997; 12/17/2002; 06/27/2006;
11/16/2007; 08/24/2010; 10/24/2011; 01/30/2014; 05/06/2014;
11/18/2016; 09/01/2017; 02/06/2018; 05/21/2018; 06/07/2019;
07/17/2020; 03/12/2021; 08/06/2021; 9/24/2021

(Նախկինում AR 1312)